



ՍիաՄանթո

Սուրբ Մեսրոպ

Սուրբ Մեսրոպ/Ներքողական

Օշականի ամենասուրբ գերեզման,
Հանճարի հո՛ղ ուրկէց այսօր,
Տասնևհինգ մրրիկեան դարերու,
Պատմութիւն մը պերճաշուք,
Արևելքէն Արևմուտք, երկու Հայքն բովանդակ,
Դեպի զքեզ, ազատօրէ՛ն աղօթելու կը շարժէ...

Օշականի անհո՛ւն մեռեալ,
Դուն բիւրաւոր ճիւղերով,
Ոսկեհոս գետ գիտութեան,
Մտքի փրկիչ, յոյսի Հսկայ, կեանքի կեդրոն,
Դուն անվախճա՛ն փոշիացեալ,
Ուրկէց ուղեղս, մանկութեանս օրերուն,
Ե՛ս աղքատօրէն եկայ վառել...

Օշականի վսեմական վարդապետ,
Դուն վեհիմաստ վանական և Աստծոյ բաժակ,
Դուն Յիսուսի բազմաբարեան պատմութեան,
Խօսքի՛ աղբիւր, բանի բարձունք,
Կարողութեանց անվե՛րջ կատար,
Դուն իմաստի ավագան և աղօթքի կապոյտ անձրև,

Ափ մը հողէդ ամբողջ երկինք մը դեռ կը բուրէ...

Օշականի դուն անկորուստ կրօնական,
Անապատին մէջ մխրճող ճգնաւոր,
Դուն անբասիր և մեհեանական մենակեաց,
Խունկի՛ անտառ, Կնդրուկներո՛ւ բուրաստան,
Քրիստոսի ազնիվ խօսքին դուն տիրական տարածիչ
Եւ գրանիտեայ ուղղափառ սին,
Եւ մտքի գմբէթ և հոգիի անծայրածիր հորիզոն,
Դո՛ւն շնորհքի աշնանային շտեմարան,
Քու հավատքէ՛դ հավատացեա՛լ ես ալ լացի...

Օշականի մէջ անմահօրէ՛ն մահացեալ,
Անճառելի և անդրանիկ դաստիարակ,
Ես երագային երեխայ մը վեցամեայ,
Այբբենարանդ ի ձեռին, անմեղօրէն գայն հեգելով
Առաջին խաչը, ճակտէս սրտիս,
Հավատա ինձ ո՛վ հայութի՛ւն...
Պատկերիդ դէմ է որ հաներ եմ...
Եւ լսէ՛ այսօր, թոթովախօս ծաղկոցի
Շուշանմարմին մանուկներէն՝
Մինչև ծերերն հողաբոյր,
Քու սուրբ անունդ կ'օրհներգեն... :
Օշականի հանճարանի՛ստ հողակոյտ,
Եկեղեցոյ խորանին քով անշուքօրէ՛ն մրափող՝
Եւ Եհովայի պատգամախօս մեծ մատեանին
Դուն սրբագիր թարգմանիչ,
Ոսկեդարու ադամանդեայ՛ բանալի,
Դուն հայ դպրութեանց անշրջանակ լուսամուտ,
Դուն լեզուի կաճառ, գեղեցկութեան իջևան,
Դուն ճեմարան մարմարային մտածումի,
Ներէ՛ որ քու աշակերտդ արբեցեալ,
Տասնևհինգ դարեր յետոյ գքե՛զ պաշտէ...

Օշականէն մեզի հսկող Մտքի Աստուած,
Դուն հասողութեան հիմնաքար,
Աստղերէն մեզ լոյս լեցնող ոսկեհասակ աշտարակ,
Ուր մեր ուղեղը մեզ կը ժպտի...
Դուն մտածման ծարաւներու արծաթեայ ծով,
Դուն Տարօնածին հսկայ՝ Մովսես,
Դուն անհպելի մատենագիր մայր-բարբառի,
Թո՛ղ իմ գանգս, վերջալոյսիս,
Քնարիս հետ, մոխիրովս առցուն,
Հուղարկավորներս՝ խնկատուփի մը փոխարէն
Հողակոյտիդ վրայ վառեն...:

Սուրբին աղօթքը

Լո՛յս տուր ինծի, Աստուա՛ծ անհերքելի,
Տիեզերքի անմեկնելի ճարտարապետ,
Ճակատագրի եւ ճանաչման ստեղծի՛չ,
Շունչի՛ մրրիկ, կեդրոնական կարողութիւն,
Սուրբ Սեղանիդ սարկաւազն Մեսրոպ՝
Իր մշուշապատ մեծ երազին՝
Քու ձեռքերէդ յստակութիւն կ'աղերսէ...

Օգնէ՛ ինծի, մեծապարզե՛ւ իմաստութիւն,
Ես՝ անցուպ հովիւ մեծ քարոզիդ,
Ես՝ եղկելի մահկանացու, ես տժգոյն տնտես՝
Հայկազնեան ահեղ ցեղին...
Ես՝ տգէտ դպիր եւ անվաւեր վարդապետ,
Ես՝ անծածան դրօշ հաւատացեալ ամբոխներուդ,
Ես՝ անօժիտ վերածնո՛ղ եւ անանձրեւ այգեպան,
Ես՝ կոյր աղբիւր եւ կորաքամակ ճանապարհորդ,
Ես՝ անարժան օրհնաբան անվերջ փառքիդ,
Իմ անդպիր հօտիս համար լո՛յս կ'աղերսեմ...

Օգնէ՛ ինձի, Աստուա՛ծ բիրենդ...

Ես՝ ողորմելի որոնիչ եւ անհետեւանք խուզարկու,
Ես՝ անքանքար քննիչ եւ անբերրի հիւլէ,
Ես՝ անաստիճան ճգնաւոր եւ անթռիչ հոնտոր,
Դառնաժպիտ թափառական եւ աշակերտ անբանիբուն,
Երագատես մոլորեալ եւ անտաղանդ անբջող,
Ես՝ սահմանափակ պատուհան եւ փակեալ դուռ,
Ես՝ իմ հոգիիս հանդէպ փշրող երկա՛թ ալիք,
Ես՝ գերեզմանի՛ պահապան եւ մեռելո՛ց հաշուակալ,
Ես՝ հրեղէն հացիդ կարօ՛տ ցորենաքաղ...
Ես՝ աներդիք գիշերող եւ անսափոր ծարաւի,
Ես՝ մենաւոր մշակ տատասկներու մէջ կորուսեալ,
Ես՝ անճառագայթ աղջամուղջ. ես անլար քնար,
Դեռ անբարբառ Հայկազնեաց հոգիին՝
Բացատրութեան Բանալի՛ մը կ'աղերսեմ...

Օգնէ՛ ինձի, Տարբերու հայր,

Ես՝ աչք աղօտ եւ տեսողութիւն անթափանց,
Ունայնամիտ ունկնդիր եւ չարալուր ականջ,
Աններդաշնակ երաժիշտ եւ մեղկաճայն երգիչ...
Ես՝ անհողագործ դաշտօրայ, շտեմարան թափուր,
Մեղանասպաս անհաց եւ ցամաքեալ գինեբաշխ,
Ես՝ անկոչ հրաւիրեալ Յիսուսական հարսանիքին,
Ես՝ անձէթ լուսարար եւ անմատեան մտածող,
Եւ անգորով զգուիչ եւ սիրագուրկ սիրահար,
Ես՝ անհրապոյր քարոզիչ եւ քարկոծեալ քրիստոնեայ,
Օժիտաբեր աղքատ եւ անոսկի հարուստ...
Ես՝ անհամբոյր շրթունք եւ հոգեգուրկ հեծեծող,
Ես՝ սի՛րտ անսէր եւ կուսութիւն անկատար,
Ես՝ անբեւեռ քալող եւ երերուն ուղեւոր...
Քու փրկութեան փարոսներէդ կաթի՛լ մը լոյս տուր ինձի...
Եւ երկնային դուռներուդ հետ հոգեկան

Կեանքին դռները դրախտին պէս թող բացուին...

Օգնէ՛ ինձի, անձի՛ր Աստուած...

Ես՝ անկարկաջ առուակ եւ խափանեալ ջրվեժ...

Ես՝ ուսուցիչ անուս եւ վարանեալ վարդապետ,

Ես՝ դպրութեանց դեռ անպսակ տնօրէն,

Ես՝ խեղճերու հանդէպ ինկո՛ղ վարագոյր...

Ես՝ որս մթաշէն, գեհեճական բանտարկեալ,

Ես՝ շիղ կորուսեալ, հո՛ւն անպարգեւ...

Մացառապատ կածան, օճապտոյտ գետնուղի...

Ես՝ անհիւրընկալ օթեան եւ անբազմոց մահաւերձ...

Լապտերիդ լոյսը մի՛ մերժեր ինձ...:

Օգնէ՛ ինձի, համագումար Սկզբունք,

Մկրտութեան ես անմիտոն աւագան,

Ես՝ աղօթքի կիսակործան գաւիթ,

Ես՝ անօրագուրկ հողագործ, անգերանդի հնձող,

Ես՝ անբոյր օծանող եւ դառնահամ իւղ,

Ես՝ անբալասան բժիշկ եւ պապակեալ պատրոյգ,

Ես՝ հողմակոծ անտառ եւ արտասուաթոր ուռենի...

Ես՝ անտ ատաղձ եւ բորբոսեալ գերան,

Ես՝ հողաշէն բուրվառ եւ անծխելի խունկ,

Ես՝ անողկոյծ որթառունկ եւ վարակեալ վարսակ,

Ես՝ անճշմարիտ ճակատ եւ անուղիղ ձեռք,

Ես՝ անկարող կարգաւոր եւ աննշխար քահանայ,

Ես՝ մենութեանս մէջ մխացող անկարաւան անապատ,

Այցելութիւն տուր ինձի...:

Օգնէ՛ ինձի, ո՛վ անբաղդատ Օրէնք,

Ես՝ վարանոտ մարդ եւ յուսահատ անձ...

Ես՝ ահաբեկ անհատ եւ շուարած շնչաւոր,

Ես՝ տարակոյսին մէջ տատանող հողմահալած,

Անլսելի աղաղակ եւ անարձագանգ շեփոր...

Ես՝ գօս տերեւ՝ աշուններէն վա՛ր ինկող...
Ես՝ չորացեալ ճիւղ եւ անհոտաւէտ վարդենի,
Ես՝ ուշիմութեան ուրուական,
Ես՝ կարճիմաստ իմացական եւ խոնարհած խելք,
Եկեղեցիիդ կամարներուն տակ հեծեծող՝
Քրիստոնէայ ժողովուրդիդ դէմ յանդիման
Ես՝ Աստուածաշունչ մեծ Մատենանիդ
Օդարալեզու ընթերցող եւ անհարազատ թարգմանիչ...

Օգնէ՛ ինծի, անծայրածիր Ծանօթութիւն,
Գերագծօր Տէր, անհուն հնարիչ,
Լոյսի գենիթ, անկնճիռ իմաստ,
Զուր երկնային, անանշրապետ հոգի,
Անհաշիւ բաշխող, երագներու սահանք,
Ճանաչումի դու ծածկողդ լուսեղէն
Իմ կործանեալ ուսիս վրա թող ծածանի,
Եւ՝ հսկումներու, հեծեծանքի, աղօթքներու
Այս իրիկուան, քառասներորդ գիշերին՝
Աստուա՛ծ անհեղի, Աստուա՛ծ անափունք,
Արարչագործ ձեռքդ իմ ուղեղիս երկարէ,
Հոն իմ գիտս խմորելու...:

Տեսիլքը

Ո՛վ ՀՐԱՇԱԼԻՔ, ո՛վ հաւատքի աննիւթական հուր,
Ո՛վ զարմանագործ զօրութիւն,
Ո՛վ բոցեղէն բժժանք, ո՛վ անլոյծ խորհուրդ,
Ահաւասիկ Քերովբէ մը մրափին մէջ Մեսրոպին,
Իր աջ ձեռքո՛վն լուսագիծ՝
Ակնթարթ մը՝ մենաստանին որմին վրայ
Հայկազնեան Այբբենարանը տառագրեց...:
Յանկարծ՝ Սուրբը մեծ Տեսիլքէն ցնորաշարժ՝
Մեռեալի մը պէս ընդոստ ոտքի,

Փետուր գրիչն եւ տախտակն ի ձեռին,
Հրաշքին տակ արտասուելով,
Որմին առջեւ անհունօրէն ծնրադրեց...:

Գյուտին փառքը

Մեսրոպ, հայ դարերուն դիմաց կեցող՝
Դուն աղամանդյա ապառաժ,
Դուն մանուկներու մերկ ուղեղեն
Մինչև հանճարը ցլքեր ցանող,
Գիտակցությանց անգլոտ փարոս...
Դուն, որուն կոփյունը կռանին,
Ժամերուն պես, բոպէին հետ անդադար,
Իմացական թանգարանի՛ն արձանները մեզ կը ձուլեն...
Դուն աննինջ հսկող, դուն տիտանյան Տեսանող,
Դուն Օրորոցեն մինչ գերեզման,
Մեր մեն մի խոսքին մեն մի շունչին,
Գեղեցկաձայն բացատրիչ...
Դուն բարբառի արարիչ, Բանի իշխան,
Դուն անբավ բավիղ տնողության,
Դուն գոյացության արգավանդ հայր,
Դուն լույսի անիվ, դուն հավատքի հրավեր,
Դուն հայրենի հողին վրա մրրկին պես բարձրացող
Անտա՛ռ անհուն, անտա՛ռ սրտի,
Որուն մեր մի հաստատաբուն ծառերն հսկա,
Մեկ մեկ քնար, մեկ մեկ փանդիո են մեր շունչին...
Մեկ մեկ շեփոր մեր հագագին ռազմական,
Մեկ մեկ պատնեշճակատագրի՛ պատուհասին...
Դուն անվատնելի ցորյանի դաշտ, դուն ձրի՛ հաց,
Դուն հունձք հարուստ, և դուն հնձան հրաշեկ,
Դուն արբեցությանց և գինիի ավագան,
Որուն մեջ ե՛ս ալ ոսկի սափորս եմ մխրճեր...
Արևներու ծարավես խենթ...